1 DEC 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

# ՅԱԿՈՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

3K4
3Ա-25
2 9 JUN 2005

Վ. Ի. ԼԵՆԻՆ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

# ՅԱԿՈՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

3817

59251-66

В. И. ЛЕНИН И. В. СТАЛИН

# О ЯКОВЕ МИХАЙЛОВИЧЕ СВЕРДЛОВЕ

Государственное издательство политической литературы
Ереван 1940

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս ժողովածուի մեջ մտել են Վ. Ի. Լենինի յոթեք ճառերը և Ի. Վ. Ստալինի հոդվածը, վոբոնք նվիրված են Յա. Մ. Սվերդլովի՝ բոլշևիկների կուսակցության խոշորագույն ղեկավարներից և ամենաստաղանդավոր կազմակերպիչներից մեկի հիշատակին։

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՅԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ճառ Համառուսական կենտգործկոմի արտակարգ նիստում 1919 թ. մարտի 18-ին

*Ընկերնե՛ր։ Այն որը, յերբ ամբողջ աշխարհի բանվորները տոնում են Փարիզի Կոմունայի հերոսական վերելքը և նրա վողբերգական վախճանը, մենք թաղում ենք Յակով Միխայլովիչ Սվերդլովին։ Ընկ. Սվերդլովին ավելի լրիվ ու ավելի ամբողջականորեն, քան վորևե մեկ ուրիշի, հաջողվեց մեր հեղափոխության ընթացքում, նրա հաղթանակներում արտահայտել պրոլետարական հեղափոխության ամենադլխավոր և ամենաեական գծերը, և պրոլետարական հեղափոխության այս առաջնորդի նշանակությունը շատ ավելի մեծ չափով հենց սրա մեջ է, քան նրա՝ հեղափոխական գործին անսահմանորեն նվիրված լինելու մեջ։*

*Ընկերնե՛ր։ Մակերեսորեն դատող մարդկանց հայացքով, մեր հեղափոխության բազմաթիվ թշնամիների կամ նրանց հայացքով, ովքեր մինչև այժմ էլ տատանվում են հեղափոխության ու նրա հակառակորդների միջև,—այդ մարդկանց հայացքով ամենից ավե-*

լի աչքի յե ընկնում հեղափոխության այն գիծը, վոր արտահայտվեց աշխատավոր ժողովրդին շահագործողների և նրա թշնամիների հետ վճռականորեն, անխնա-հաստատակամորեն դատաստան տեսնելով։ Կասկած չկա, վոր առանց այս գծի,—առանց հեղափոխական բռնության,—պրոլետարիատը չեր կարողանա հաղթել, տակայն նույնպես կասկած չի կարող լինել նաև այն մասին, վոր հեղափոխական բռնությունը ներկայացնում եր հեղափոխության անհրաժեշտ և որինական յեղանակը նրա զարգացման վորոշ մոմենտներում միայն, վորոշ և հատուկ պայմանների առկայության ժամանակ միայն, մինչդեռ այս հեղափոխության շատ ավելի խոր, մշտական հատկությունը և նրա հաղթանակների պայմանը հանդիսանում եր և մնում է պրոլետարական մասսաների կազմակերպումը, աշխատավորների կազմակերպումը։ Ահա աշխատավորների միլիոնների այս կազմակերպման մեջ էլ կայանում են հեղափոխության ամենալավագույն պայմանները, նրա հաղթանակների ամենախոր աղբյուրը։ Պրոլետարական հեղափոխության այս գիծն էլ պայքարի ընթացքում առաջ քաշեց այնպիսի առաջնորդներ, վորոնք ամենից ավելի մարմնավորեցին՝ հեղափոխության մեջ առաջ չտեսնված այս առանձնահատկությունը—մասսաների կազմակերպումը։ Պրոլետարական հեղափոխության այս գիծն առաջ քաշեց հենց այնպիսի մի մարդու, ինչպիսին եր Յա. Մ. Սվերդլովը, վորն ամենից առաջ և ամենից ավելի կազմակերպիչ եր։

Ընկերնե՛ր։ Մենք, ռուսներս, հեղափոխության տեսական, յերբեմն տանջալի և անչափորեն յերկար



նախապատրաստման հատկապես հեղափոխության համար ծանր ժամանակներում, մենք ստիպված ենք յեղել ամենից շատ տառապել թեորիաների, սկզբունքների, ծրագրի և գործի միջև յեղած տարակարծությունից, մենք ստիպված ենք յեղել ամենից ավելի հաճախ տառապել անմիջական գործողությունից կտրված թեորիայի մեջ չափից դուրս խորասուզվելուց։

Ռուսական հեղափոխական շարժման պատմությունը շատ տասնամյակների ընթացքում գիտե այնպիսի մարդկանց մարտիրոսագրություն, վորոնք նվիրված են յեղել հեղափոխական գործին, բայց հնարավորություն չեն ունեցել իրենց հեղափոխական իդեալների համար գործնական կիրառում գտնել։ Յեվ այս տեսակետից պրոլետարական հեղափոխությունն առաջին անգամ առաջվա մենակ մարդկանց, հեղափոխական պայքարի հերոսներին իսկական հող, իսկական բաղ, իսկական իրագործություն, իսկական աուդիտորիա և իսկական պրոլետարական բանակ տվեց, վորտեղ այդ առաջնորդները կարող եյին յերևան բերել իրենց։ Այս տեսակետից ամենից ավելի հենց այն առաջնորդներն են աչքի ընկնում, վորոնք կարողացել են, իրրև պրակտիկ կերպով գործող կազմակերպիչներ, իրենց համար այնպիսի բացառիկ ակնառոր տեղ գրավել, վոր գրավել եր և վորից իրավամբ ոգտվում եր Յա. Մ. Սվերդլովը։

Յեթե մենք մի հայացք գցենք պրոլետարական հեղափոխության այս առաջնորդի կյանքի ուղու վրա, ապա միանգամից կտեսնենք, վոր նրա յերևելի կազմակերպչական տաղանդը յերկար պայքարի ընթաց-

քում է մշակվել, վոր պրոլետարական հեղափոխության այս առաջնորդը խոշոր հեղափոխականի իր յերևելի հատկություններից ամեն մեկն ինքն է կռել-կոփել, հեղափոխականի գործունեության ամենից ավելի ծանր պայմաններում զանազան եպոխաներ ապրելով ու կրելով: Իր գործունեության առաջին շրջանում, դեռ բոլորովին պատանի, նա, քաղաքական գիտակցությամբ հագիվ տոգորված, միանգամից և ամբողջովին հեղափոխությանը նվիրվեց: Այդ եպոխայում, XX դարի հենց սկզբին, մեր առջև եր ընկ. Սվերդլովը, վորպես պրոֆեսիոնալ հեղափոխականի ամենից ավելի ցայտուն արտահայտված տիպ,—մի մարդու, վորն ամբողջովին կապը խզել եր ընտանիքի հետ, հին բուրժուական հասարակության բոլոր հարմարությունների և սովորությունների հետ, մի մարդու, վորն ամբողջովին և անսահմանորեն նվիրվեց հեղափոխությանը և յերկար տարիներում, նույնիսկ տասնամյակներում, բանտից աքսոր և աքսորից բանտ անցնելով, իր մեջ կռեց այն հատկությունները, վորոնք հեղափոխականներին կոփում են յերկար ու յերկար տարիների համար:

Բայց այս պրոֆեսիոնալ հեղափոխականը յերբեք, վոչ մի բոպե մասսաներից չեր կտրվում: Յեթե ցարիզմի պայմանները նրան ել, ինչպես և այն ժամանակի բոլոր հեղափոխականներին, առավելապես ընդհատակյա, անլեգալ գործունեության եյին դատապարտում, ապա այդ ընդհատակյա և անլեգալ գործունեության մեջ ել ընկ. Սվերդլովը միշտ ընթանում եր թև-թևի և ձեռք-ձեռքի առաջավոր բանվորների հետ, վորոնք հենց XX դարի սկզբից սկսեցին իրենցով փոխարինել ինտելիգենցիայի միջավայրից դուրս յեկած հեղափոխականների առաջվա սերնդին:

Հենց այդ ժամանակ առաջավոր բանվորները տասնյակներով և հարյուրներով աշխատանքի դուրս յեկան և իրենց մեջ դաստիարակեցին հեղափոխական պայքարի այն կոփվածությունը, առանց վորի, մասսաների հետ ամենասամուր կապվածության հետ միասին, չեր կարող պրոլետարիատի հաջող հեղափոխություն լինել Ռուսաստանում: Անլեգալ աշխատանքի հենց այս յերկար ուղին է ամենից ավելի բնորոշն այն մարդու համար, վորը, շարունակ մասնակցելով պայքարին, յերբեք մասսաներից չեր կտրվում, յերբեք Ռուսաստանը չեր թողնում, գործում եր միշտ բանվորներից լավագույնների հետ և կարողանում եր, չնայած այն կտրվածությանը կյանքից, վորին հեղափոխականին դատապարտում եյին հետապնդումները,—կարողանում եր իր մեջ մշակել վոչ միայն բանվորներից սիրված մի առաջնորդ, վոչ միայն մի առաջնորդ, վորն ամենից ավելի լայն և ամենից ավելի շատ եր ծանոթ պրակտիկային, այլև առաջավոր պրոլետարների կազմակերպիչ: Յեվ յեթե վոմանք կարծում եյին—ամենից ավելի հաճախ այսպես եյին կարծում մեր հակառակորդները, կամ տատանվող մարդիկ,—վոր անլեգալ աշխատանքով այս լիակատար կլանվածությունը, վոր պրոֆեսիոնալ հեղափոխականի այս գիծը նրան մասսաներից կտրում է, ապա Յա. Մ. Սվերդլովի հեղափոխական գործունեության որինակն ել հենց մեզ ցույց է տալիս, թե ինչքան խորապես սխալ է այդ հայացքը, թե ինչքան, ընդհակառակը, հենց հեղափոխական գործին այն անսահման

նվիրվածությունը, վորը նշանավորել է շատ բանտեր և ամենահեռավոր սիբիրյան աքսորավայրեր շրջադայած մարդկանց կյանքը; հենց դա յեր ստեղծում այսպիսի առաջնորդներ, մեր պրոլետարիատի ծաղիկը: Իսկ յեթե դա զուգորդվում եր մարդկանց ճանաչելու, կազմակերպական աշխատանքը կարդավորելու հատկության, հմտության հետ, ապա միայն դա ել խոշոր կազմակերպիչներ եր կոփում: Անլեգալ խմբակների միջոցով, հեղափոխական ընդհատակյա աշխատանքի միջոցով, անլեգալ կուսակցության միջոցով, վորը վոչ վոք այնպես ամբողջականորեն չեր մարմնավորում և չեր արտահայտում, ինչպես Յա. Մ. Սվերդլովը,— միայն այդ գործնական դպրոցի միջոցով, միայն այդպիսի ուղիով նա կարող եր հասնել առաջին սոցիալիստական Խորհրդային հանրապետության մեջ առաջին մարդու պոստին, պրոլետարական լայն մասսաների կազմակերպիչներից առաջինի պոստին:

Ընկերնե՛ր: Բոլորին, ում վիճակվել է, ինչպես վիճակվել է ինձ, որ-ավուր աշխատել ընկ. Սվերդլովի հետ, նրանց համար հատկապես պարզ եր, վոր միայն այս մարդու բացառիկ կազմակերպչական տաղանդն եր ապահովում մեզ համար այն, ինչով մենք մինչև այժմ հպարտանում եյինք և հպարտանում եյինք լիակատար իրավունքով: Նա մեզ համար լիովին ապահովում եր համերաշխ, նպատակահարմար, իսկապես կազմակերպված աշխատանքի հնարավորություն, այնպիսի աշխատանքի, վորն արժանի լիներ կազմակերպված պրոլետարական մասսաներին և համապատասխաներ պրոլետարական հեղափոխության պահանջներին,—այն համախմբված կազմակերպված



աշխատանքի, առանց վորի մենք չեյինք ունենա վոչ մի հաջողություն, առանց վորի մենք չեյինք հաղթահարի այն անհաշիվ դժվարություններից վոչ մեկը, այն ծանր փորձություններից վոչ մեկը, վորոնցով մենք անցել ենք մինչև այժմ և վորոնցով հարկադրված ենք անցնել այժմ:

Այն յեռուն պայքարում, ինչպիսին հանդիսանում և հեղափոխությունը, այն հատուկ պոստում, վորի վրա կանգնած է ամեն մի հեղափոխական, յեթե նույնիսկ մի փոքրիկ կոլեգիայի աշխատանքը դատողություն է դառնում, հսկայական նշանակություն ունի խոշոր, պայքարի ընթացքում նվաճված, անվիճելիորեն անառարկելի բարոյական հեղինակությունը, հեղինակություն, վոր, իհարկե, իր ուժը քաղում է վո՛չ թե վերացական բարոյականությունից, այլ հեղափոխական մարտիկի բարոյականությունից, հեղափոխական մասսաների շարքերի և տողանների բարոյականությունից:

Յեթե մեզ հաջողվեց ավելի քան մեկ տարվա ընթացքում անչափ ծանրությունների դիմանալ, վորոնք ընկնում եյին անձնվեր հեղափոխականների մի նեղ շրջանի վրա, յեթե ղեկավար խմբերը կարողանում եյին այնպես հաստատ, այնպես արագ, այնպես միահամուռ կերպով լուծել դժվարագույն հարցերը, ապա այս միայն այն պատճառով, վոր նրանց մեջ աչքի ընկնող տեղ եր գրավում այնպիսի բացառիկ, տաղանդավոր կազմակերպիչ, ինչպիսին եր Յակով Միխայլովիչը: Միայն նրան հաջողվեց իր մեջ միացնել պրոլետարական շարժման ղեկավար գործիչների անձնական կազմի զարմանալի ճանաչողությունը, միայն

նրան հաջողվեց պայքարի յերկար տարիների ընթացքում,—վորի մասին այստեղ յես չափազանց համառոտ կերպով միայն կարող եմ խոսել,—իր մեջ մշակել պրակտիկի զարմանալի հոտառություն, կազմակերպչի զարմանալի տաղանդ, այն անպայման անվիճելի հեղինակությունը, վորի շնորհիվ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի աշխատանքի խոշորագույն ճյուղերը, վորոնք միայն մի խումբ մարդկանց ուժի բան եյին,—ամբողջովին և բացառապես միանձնյա կերպով վարում եր Յակով Միխայլովիչը: Միայն նրան հաջողվեց այնպիսի դերք նվաճել, վոր բավական եր հսկայական թվով խոշորագույն և կարևորագույն կազմակերպական գործնական հարցերում, բավական եր նրա մեկ խոսքը, վորպեսզի անվիճելի կերպով, առանց վոբևե խորհրդակցության, առանց վորևե ձևական քվեարկության, հարցը լուծվեր միանգամ ընդմիշտ, և բոլորը լռվին հավատացած եյին լինում, վոր հարցը լուծված է այնպիսի գործնական դիտելության և այնպիսի կազմակերպչական հոտառության հիման վրա, վոր վո՛չ միայն հարյուրավոր և հազարավոր առաջավոր բանվորներ, այլև մասսաներն այդ վորոշումը վերջնական կհամարեն:

Պատմությունն արդեն վաղուց ցույց է տվել, վոր մեծ հեղափոխություններն իրենց պայքարի ընթացքում առաջ են քաշում մեծ մարդիկ և այնպիսի տաղանդներ են ծավալում, վորոնք առաջ անհնար եյին թվում: Վոչ վոք չեր հավատա, վոր անլեգալ խմբակի և ընդհատակյա աշխատանքի դպրոցից, մի փոքրիկ հալածված կուսակցության և Տուրուխանսկի բանտի դպրոցից կարող եր դուրս գալ այսպիսի կազմակերպիչ, վորը նվաճեց իր համար բացարձակ անվիճելի հեղինակություն, հանդիսանալով ամբողջ Խորհրդային իշխանության կազմակերպիչը Ռուսաստանում և իր դիտելիքներով միակ կազմակերպիչն այն կուսակցության աշխատանքի, վորն ստեղծում եր այդ Խորհուրդները և գործնականորեն իրականացնում Խորհրդային իշխանությունը, վորն այժմ իր ծանր, տանջալի, արյունով վողողված, բայց հաղթական յերթն է կատարում դեպի բոլոր ժողովուրդները, ամբողջ աշխարհի յերկրներով:

Այսպիսի մարդուն, վորն իր մեջ մշակել եր այդ բացառիկ կազմակերպչական տաղանդը, մենք յերբեք չենք կարող փոխարինել, յեթե փոխարինել ասելով հասկանանք մեկ անձն, մեկ ընկեր գտնելու հնարավորությունը, վորն իր մեջ համատեղում է այդպիսի ընդունակություններ: Յակով Միխայլովիչին մոտիկից ճանաչողներից, նրա մշտական աշխատանքը դիտողներից վոչ վոք չի կարող կասկածել, վոր այս իմաստով Յակով Միխայլովիչն անփոխարինելի յե: Այն աշխատանքը, վոր նա մենակ անում եր կազմակերպման, մարդկանց ընտրության, նրանց ըստ բոլոր բազմազան մասնագիտությունների պատասխանատու պոստերի նշանակելու ասպարեզում,—այդ աշխատանքն այժմ մեր ուժը կների միայն այն դեպքում, յեթե այն խոշոր ճյուղերից ամեն մեկի համար, վոր միանձնյա կերպով վարում եր ընկ. Սվերդլովը, դուք առաջ քաշեք մարդկանց ամբողջ խմբեր, վորոնք նրա հետքով գնալով, կարողանային մոտենալ այն բանին, ինչ անում եր մեկ մարդը:

Բայց պրոլետարական հեղափոխությունը հենց իր աղբյուրների խորությամբ է ուժեղ: Մենք գիտենք, որ այն մարդկանց փոխարեն, որոնք անձնվիրաբար իրենց կյանքը տվել են այս պայքարին, այս պայքարում են դրել այն, պրոլետարական հեղափոխությունն առաջ է քաշում այլ մարդկանց տողաններ, թերևս, ավելի քիչ փորձված, ավելի քիչ դիտելիքներ ունեցող և ավելի քիչ նախապատրաստված իրենց ուղու սկզբին, բայց այնպիսի մարդկանց, որոնք լայնորեն կապված են մասսաների հետ և որոնք ընդունակ են հեռացած խոշորագույն տաղանդների փոխարեն առաջ քաշել մարդկանց խմբեր, որոնք շարունակում են նրանց գործը, գնում են նրանց ուղիով, ավարտում են այն, ինչ նրանք սկսել են: Ցեվ այս իմաստով մենք խորապես համոզված ենք, որ պրոլետարական հեղափոխությունը Ռուսաստանում և ամբողջ աշխարհում առաջ կքաշի մարդկանց նորանոր խմբեր, առաջ կքաշի պրոլետարներից, աշխատավոր գյուղացիներից բազմաթիվ շերտեր, որոնք կտան կյանքի այն պրակտիկ ճանաչողությունը, այն, յեթե որ միանձնյա, ապա կոլեկտիվ կազմակերպչական տաղանդը, առանց որի պրոլետարների միլիոնավոր բանակները չեն կարող գնալ դեպի իրենց հաղթանակը:

Ընկ. Յա. Մ. Սվերդլովի հիշատակը որ միայն հեղափոխականի՝ իր գործին նվիրված լինելու հավիտենական սիմվոլ կծառայի, որ միայն գործնական զգաստության և գործնական հմտության զուգորդման, մասսաների հետ լիակատար կապ ունենալու և նրանց ուղղություն տալու հմտության որինակ կծառայի,—այլև գրավական կծառայի այն բանի, որ պրոլետարների շարունակ ավելի ու ավելի լայն մասսաները, այս որինակներով ղեկավարվելով, առաջ ու առաջ կընթանան դեպի համաշխարհային կոմունիստական հեղափոխության լիակատար հաղթանակը:

Լենին, հ. XXIV, եջ 79—83:

---

# Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

## ՅԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԱՍԻՆ

Կան մարդիկ, պրոլետարիատի առաջնորդներ, որոնց մասին մամուլում չեն աղմկում, գուցե այն պատճառով, որ նրանք իրենք չեն սիրում աղմկել իրենց մասին, բայց որոնք, այնուամենայնիվ, հանդիսանում են հեղափոխական շարժման կենսական հյութը և իսկական ղեկավարները: Այդպիսի առաջնորդների թվին է պատկանում Յա. Մ. Սվերդլովը:

Կազմակերպիչ՝ մինչև վոսկրների ծուծը. կազմակերպիչ՝ բնավորությամբ, ունակություններով, հեղափոխական դաստիարակությամբ, հոտառությամբ, կազմակերպիչ՝ իր ամբողջ յեռուն գործունեությամբ,—այս է Յա. Մ. Սվերդլովի ֆիզիոգրան:

Ի՞նչ է նշանակում լինել առաջնորդ-կազմակերպիչ մեր պայմաններում, յերբ իշխանությանը գլուխ է կանգնած պրոլետարիատը: Այդ չի նշանակում ոգնականներ ընտրել, գրասենյակ կազմել և նրա միջոցով կարգադրություններ անել: Առաջնորդ-կազմակերպիչ լինել մեր պայմաններում—այդ նշանակում է, նախ, ճանաչել աշխատողներին, կարողանալ ըմբռնել նրանց արժանիքներն ու թերությունները, կարողանալ մոտենալ աշխատողներին, յերկրորդ, կարողանալ աշխատողներին դասավորել այնպես,

1) վորպեսզի յուրաքանչյուր աշխատող իրեն իր տեղում զգա.

2) վորպեսզի յուրաքանչյուր աշխատող կարողանա հեղափոխությանը տալ մաքսիմումն այն բանի, ինչ ընդհանրապես նա ընդունակ է տալու ըստ իր անձնական հատկությունների.

3) վորպեսզի աշխատողների այդպիսի դասավորման արդյունքը լինեն վո՛չ թե ընդհատումներ, այլ համաձայնեցվածություն, միասնություն, ամբողջությամբ առած աշխատանքի ընդհանուր վերելք.

4) վորպեսզի այդ ձևով կազմակերպված աշխատանքի ընդհանուր ուղղությունը ծառայի վորպես արտահայտում ու իրականացում այն քաղաքական իդեայի, հանուն վորի կատարվում է աշխատողների դասավորումն ըստ պոստերի:

Յա. Մ. Սվերդլովը մեր կուսակցության և մեր պետության հենց այդպիսի առաջնորդ-կազմակերպիչ եր:

1917—1918 թ. թ. ժամանակաշրջանը կուսակցության և պետության համար բեկումնային ժամանակաշրջան եր: Այդ ժամանակաշրջանում կուսակցությունն առաջին անգամ դարձավ կառավարող ուժ: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ առաջ յեկավ մի նոր իշխանություն,—խորհուրդների իշխանությունը, բանվորների և գյուղացիների իշխանությունը: Մինչ այդ անլեգալ կուսակցությունը փոխադրել նոր ռելսերի վրա, ստեղծել պրոլետարական նոր պետության կազմակերպական հիմքերը. դտնել կուսակցու-





ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

թյան և խորհուրդների փոխհարաբերությունների կազմակերպական ձևերը, կուսակցության համար ղեկավարություն ապահովելով, իսկ խորհուրդների համար՝ նրանց նորմալ զարգացումը,—ահա այն ամենարարդ կազմակերպական խնդիրը, որն այն ժամանակ ծառացած եր կուսակցության առջև: Կուսակցության մեջ չեն գտնվի մարդիկ, որոնք համարձակվեն ժխտել, որ Յա. Մ. Սվերդլովը մեկն եր առաջիններից, յեթե վոչ առաջինը, որ հմտորեն և անհիվանդագին կերպով լուծեց նոր Ռուսաստանի կառուցման այդ կազմակերպական խնդիրը:

Բուրժուազիայի իդեոլոգներն ու ագենտները սիրում են կրկնել այն ծամծմված ֆրազները, թե բոլշևիկները կառուցել չգիտեն, թե նրանք ընդունակ են իրը միայն քանդելու: Յա. Մ. Սվերդլովը, նրա ամբողջ աշխատանքն այս հերյուրանքների կենդանի հերքումն են: Յա. Մ. Սվերդլովը և մեր կուսակցության մեջ նրա տարած աշխատանքը պատահականություն չե: Յա. Մ. Սվերդլովի պես մեծ շինարար ծնող կուսակցությունը կարող ե համարձակ կերպով ասել, որ նա կարող ե հենց նույնպես լավ կառուցել նորը, ինչպես և քանդել հինը:

Յես հեռու յեմ այն բանից, որպեսզի լիակատար ծանոթության հավակնություն ունենամ մեր կուսակցության բոլոր կազմակերպիչների և շինարարների հետ, բայց պետք ե ասեմ, որ ինձ ծանոթ բոլոր յերևելի կազմակերպիչներից—Լենինից հետո—յես գիտեմ միայն յերկուսին, որոնցով մեր կուսակցությունը կարող ե և պետք ե պարծենա. Ի. Ֆ. Դուբրովինսկուն, որը զոհվեց Տուրուխանսկի աքսորավայրում, և Յա. Մ. Սվերդլովին, որն այրվեց կուսակցության և պետության շինարարության աշխատանքում:

Առաջին անգամ տպագրված ե 1924 թվին «Пролетарская революция» ժուռնալի № 11 (34)-ում, եջ 107—108:

---

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. ՅԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ճառ՝ գրի առնված գրամոֆոնի պլաստինկայի վրա 1919 թ. մարտի վերջին

Ով որ–ավուր աշխատել է ընկ. Սվերդլովի հետ, նրա համար հատկապես պարզ է, վոր նրա բացառիկ կազմակերպչական տաղանդը մեզ համար ապահովում էր այն, ինչով մենք լիակատար իրավունքով հպարտանում ենք: Նա մեզ համար ապահովում էր համերաշխ, նպատակահարմար կազմակերպված աշխատանքի հնարավորություն, աշխատանք, վորն արժանի լիներ կազմակերպված պրոլետարական մասսաներին, աշխատանք, առանց վորի չեր կարող հաջողություն լինել և վորն ամբողջովին համապատասխանում էր պրոլետարական հեղափոխության պահանջներին: Ընկ. Յակով Միխայլովիչ Սվերդլովի հիշատակը վո՛չ միայն հեղափոխականի՝ իր գործին նվիրված լինելու սիմվոլ կծառայի, վո՛չ միայն գործնական զգաստության և գործնական հմտության զուգորդման, մասսաների հետ լիակատար կապ ունենալու, նրանց ուղղություն տալու հմտության որինակ կծառայի, այլև դրական կծառայի այն բանի, վոր պրոլետարիատի չարունակ ավելի ու ավելի լայն մասսաները չարունակ առաջ ու առաջ կընթանան դեպի կոմունիստական հեղափոխության լիակատար հաղթանակը:

Լենին, հ. XXIV, էջ 193:

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՀԱՆ ՑԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ

**1920 թ. մարտի 16-ին**

ՀԱՄԱՌՈՏ ԼՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մատնանշելով, որ հանգուցյալ ընկ. Սվերդլովն ուժված էր խոշորագույն կազմակերպչական տաղանդով, Լենինը նշեց, որ այդ ակամայից մարդու մտքերն ուղղում է դեպի այն նշանակությունը, որ ունի կազմակերպությունը, և դեպի այն դերը, որ ունեն կազմակերպիչները՝ խորհրդային շինարարության գործում: Բնորոշելով կազմակերպության բացառիկ նշանակությունը, Լենինը մատնանշում է, որ հատկապես այն հանդիսանում է բանվոր դասակարգի դերխավոր գործիքը հեղափոխական պայքարում: Մատնանշելով հասարակական ուժերի փոխհարաբերությունը տարբեր մոմենտներում՝ սկսած Հոկտեմբերյան հեղափոխությունից, Լենինն ասում է, որ պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ, եթե չլիներ աշխատավորների համախմբումը: Նա այն յեզրակացությանն է հանգում, որ մեր ճակատներում ունեցած բոլոր ռազմական հաջողությունների, ինչպես և տնտեսական փլուզման դեմ մղվող պայքարում աստիճանաբար ձեռք բերվող հաջողությունների գլխավոր ուժը հենց կազմակերպվածության մեջ է կայանում: Այս առնչությունով գնահատելով հանգուցյալ ընկ. Սվերդլովի աշխատանքը, որպես կազմակերպչի, Լենինը նշում է, որ մենք կազմակերպիչների այդպիսի ավանդարդ ունեցանք շնորհիվ այն բանի, որ նրանք անցել էին կյանքի ծանր դպրոցը դեռ այն ժամանակ, երբ վիճակված էր ընդհատակում աշխատել: Կազմակերպիչների նույնպիսի ավանդարդ առանձնապես հարկավոր է այժմ Գերմանիայում, որն ապրում է կոնտրռևոլյուցիայի շրջանը: Լենինը մատնանշում է, որ աշխատավորների միջավայրում, նույնիսկ անկուսակցական բանվորների և գյուղացիների մեջ կազմակերպչական շատ տաղանդներ կան, բայց մենք դեռ չենք սովորել նրանց գտնել և դնել իրենց պատշաճ տեղում: Նա վստահություն է հայտնում, որ հետագայում այդ միջավայրից հետզհետե ավելի ու ավելի թվով կազմակերպիչներ առաջ կգան, որոնք հիշելով ընկ. Սվերդլովի աշխատանքը, հաստատուն քայլերով կգնան նրա հետքերով:

[1] Լենին, հ. XXV, էջ 87:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Եջ |
|---|---|
| Հրատարակչության կողմից . . . . . | 3 |
| Վ. Ի. Լենին—Ցա. Մ. Սվերդլովի հիշատակին . . . | 5 |
| Ի. Վ. Ստալին—Ցա. Մ. Սվերդլովի մասին . . . . . | 16 |
| Վ. Ի. Լենին—Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ ընկ. Ցա. Մ. Սվերդլովի հիշատակին . . . . . | 20 |
| Վ. Ի. Լենին—Ճառ Ցա. Մ. Սվերդլովի հիշատակին նվիրված նիստում . . . . . | 22 |



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна



Թարգմանիչ Ռոզա Վարդապետյան
Խմբագիր Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Լ. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Վ. 1142 հրատ. № 815
պատվեր № 114, տիրաժ 5000
Հանձնվել է արտադրության 27/III 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 23/VI 1940 թ.
Գինը 20 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65



ՀՀ Ազգային գրադարան
NL0181909

ԳԻՆԸ 20 Կ.

20524

В. И. ЛЕНИН И. В. СТАЛИН

О ЯКОВЕ МИХАЙЛОВИЧЕ СВЕРДЛОВЕ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940